


Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



Դաւիթ Թագաւորը (մասն 2)



Written by: Edward Hughes
Illustrated by: Lazarus; Alastair Paterson
Adapted by: Ruth Klassen
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife
gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.
Produced by: Bible for Children
www.M1914.org

BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada

©2021 Bible for Children, Inc.
License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.

1

Տէյվիտ ճուտայի թագաւորն էր,
հարաւային Պաղեստին,
բայց մնացեալ
հարայելը հշարոշէթը
Սաուլի որդին
առին իբր
թագաւոր:
Եթը տարի
ներքին
պատերազմ
բարձրացաւ:
Բայց Դաւիթ
աւելի կը
զօրանար:



2

Վերջապես հշարշէթ թագաւորը սպանուեցաւ իր երկու զինուորներուն ձեռքով:




3

Յետոյ բոլոր հարայելի տոհմերը եկան Դաւիթի եւ զինք թագաւոր օծեցին ամբողջ հարայելի վրայ: Վերջապես Դաւիթ թագաւոր եղաւ բոլոր երկրին վրայ:



4


Առաջին գործը, որ Դաւիթ թագաւորը րրաւ Երուսաղէմը գրաւեց: Այդ քաղաքը ճանչուեցաւ իբր Դաւիթի քաղաքը: Ան քաղաքը ամուր ձեւով վերակառուցեց թշնամիներուն դէմ: Երուսաղէմէն ետք Դաւիթի բանակը գնաց գրաւելու համար Պաղեստինը եւ ուրիշ թշնամիներ հարայելի:



5

Յաջորդ գործը՝ Դաւիթ թագաւորը Աստուծոյ, Տապանը Երուսաղէմ բերաւ:

Աստուծոյ Տապանը կը պարունակէր տասը պատուիրաններէն օրինակներ եւ ուրիշ օրէնքներ, որ Աստուած տուած էր Մովսէսին: հարայելացիներուն կը յիշեցներ, թէ Աստուած սուրբ է եւ իրենք պետք է իրեն հնազանդէին:




6

Դաւիթ պետք էր շատ մը պատերազմներ մղեր իր թագաւորութեան առաջին տարիներուն: Ան խելացի զինուոր եւ խոնարհ մարդ մըն էր, որ Աստուծոյ ցուցմունքին համար կ'աղօթէր:




7

Ան շատ նեղուած էր որ ինք գեղեցիկ տան մէջ կ'ապրի եւ տակաւին Աստուծոյ տապանը վրանի տակ է: Դաւիթ որոշեց տաճար մը շինել Նաթան Աստուծոյ մարգարէն քաջալերեց զինք:



8




Այդ երեկոյ,
Աստուած
լուր դրկեց
Դաւիթի. "Իմ
ծառաս Դաւիթ
Տէրը քեզի
տուն պիտի
կառուցէ:
Երբ քու օրերդ
վերջանան եւ


հանգստութեան կոչուիս
քու հայրերուդ հետ, ես քու որդիդ թագաւոր
պիտի նշանակեմ: Ան իմ անունիս համար տուն
մը պիտի կառուցէ եւ ես իր թագաւորութեան
գահը յաւիտեան պիտի հիմնեմ":

9

Դաւիթ ուզեց Սառայի ընտանիքէն ողջերուն օգնել:
Ան միայն ճոնաթանի տղան Մեֆիպոշէթը գտաւ, որ
հաշմանդամ էր: "Ան պիտի սեղանակիցս դառնայ
ինչպէս թագաւորին բոլոր տղաքը",
ըսաւ Դաւիթ: Դաւիթ շատ
լաւ էր Մեֆիպոշէթի հետ,
որովհետեւ ճոնաթան
իր ամենալաւ
բարեկամն էր:




10



Այնքան ատեն որ Դաւիթ կը
վստահէր Աստուծոյ եւ Ասոր
կ'ենթարկուէր, Աստուած
կ'օգնէր զինք, որ աւելի
բարգաւաճի: Սակայն օր
մը, սոսկալի շուք մը իջաւ
Դաւիթի կեանքին վրայ: Ան
իր բանակը դրկեց կռուելու
եւ ինք մնաց Երուսաղէմ:

11




Երեկոյ մը ան չէր
կրնար քնանալ:
Տանիք ելաւ եւ
վերէն դիտեց
քաղաքը:

12

Դաւիթ տեսաւ գեղեցիկ կին
մը, որ լոգանք կ'առնէ: Ասոր
անունը Պաթշէպա էր: Դաւիթ
մեղք գործեց անոր հետ,
հակառակ անոր ամուսինը,
Յուրիա, Դաւիթի քաջարի
զինուորներէն մէկն էր: Երբ
կինը ըսաւ Դաւիթի, որ իրմէ
զաւակ կը սպասէ: Դաւիթ
զիտցաւ, որ մեղքը աւելի
խնդիրներ պիտի ստեղծէ:




13



Աստուծոյ
խոստովանելու տեղ,
Դաւիթ փորձեց իր մեղքը ծածկել: Բայց այդ չի
յաջողիր: Ան Յուրիան պատերազմի դաշտէն տուն
կանչեց, յուսալով, որ Յուրիա կարծէ, թէ մանուկը
իրմէ է, Բայց Յուրիան չէր ուզեր մնալ երբ իր
ընկերները պատերազմի դաշտը կը կռուէին:
Յուրիա թագաւորին տան դրան առջեւ քնացաւ:

14

Ուրեմն Դաւիթ աւելի գէշ բան մը ըրաւ: Ան Յուրիան տն պատերազմի դաշտ դրկեց եւ հետը նամակով մը: Նամակը սպարապետին կ'ըսէր, թէ Յուրիան պետք էր պատերազմի դաշտին վրայ մեռներ: Երբ Յուրիան մեռաւ, Դաւիթ Պաթշիպան



առաւ իբր իր կինը:

15

Աստուած իր ծառան Նաթանը դրկեց Դաւիթի ցոյց տալու համար իր գործած մեղքը: Նաթան պատմեց Դաւիթի պատմութիւն մը հարուստ մարդու մը մասին եւ աղքատ մարդու մը մասին: Հարուստ մարդը հարիւրներով ոչխարներ ուներ: Բայց աղքատ մարդը միայն մէկ գառնուկ ուներ, որուն իր աղջկան պէս կը սիրէր:



16

Երբ ճամբորդ մը եկաւ հարուստ մարդուն քով ան իր ոչխարներէն չմորթեց, այլ մորթեց աղքատ մարդուն գառնուկը:




17

Դաւիթ շատ զայրացաւ հարուստ մարդուն անձնասիրութենէն: Ան պոռաց. "Այն մարդը, որ այս արարքը կատարած է պետք է անշուշտ մեռնի":



18

"Դո՛ւն ես այդ մարդը" ... Նաթան ըսաւ Դաւիթի: Դաւիթ ինչ որ ըրաւ աւելի գէշ էր ան ինչ որ պատմութեան մէջի մարդը ըրած էր:



19

Աստուած Դաւիթի ցոյց տուաւ իր չարութիւնը եւ Դաւիթ շատ կը զոջար իր գործած մեղքին համար: Ան Աստուծոյ ըսաւ. "Քու դէմդ ես մեղք գործեցի եւ գէշութիւն ըրի եւ Աստուած ներեց Դաւիթի մեղքը:" Բայց Պաթշիպայի գաւակը շատ



հիւանդացաւ եւ ծնելէն անմիջապէս տըք մեռաւ:

20

Աստուած ներեց Դաւիթի
 ահռելի մեղքը: Յետոյ
 Պաթշիպա ուրիշ գաւակ
 մը ունեցաւ Սողոմոն, որ
 պիտի ըլլար հզօր թագաւոր
 Դաւիթէն յետոյ: Բայց Դաւիթ
 թագաւոր ուրիշ գաւակներ ալ
 ուներ, որոնցմէ մի քանին շատ
 մեծ դժբախտութիւններու
 պատճառ դարձան:



21

Դաւիթ թագաւորը (մասն 2)

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
 Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

2 Սամուէլ 1-12

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
 Սաղմոս 119:130

22

Վերջ

21

60

23

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր
 հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ,
 որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեզ
 կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան
 մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի
 հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը
 Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը
 հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ
 քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ
 կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերեդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր
 Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար
 եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ
 կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
 կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի
 որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
 Յովհաննու 3:16

24